

Հաստատում եմ՝ 19 մայիսի 2022 թ.
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Գիտական գծով պրոռեկտոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,



ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ

Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանի

«Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» / անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ինչպես հայտնի է, գործարար մարդիկ հաճախակի են մասնակցում միջլեզվամշակութային գործարար բանակցությունների, գործուղվում են տարբեր երկրներ, շփվում են իրենց ոլորտը ներկայացնող տարբեր մասնագետների հետ: Նրանց անգլերենի իմացությունը դառնում է պարտադիր պահանջ, քանի որ միջմասնագիտական, միջմշակութային հաղորդակցությունը բիզնեսի զարգացման կարևոր պայման է:

Տարբեր ոլորտներում հաղորդակցվելիս գործարարները ստիպված են լինում ոչ միայն հաղորդակցվել առօրյա թեմաներով, այլև ներկայացնել իրենց հետաքրքրող մասնագիտական խնդիրները անգլերեն լեզվով:

ՀՀ բուհական համակարգը համարժեքորեն է փորձում արձագանքել գործարար ոլորտում տեղի ունեցող զարգացումները: Կոնկրետ անգլերենի ուսուցումը դառնում է կարևոր գործոն ապագա գործարարների կայացման գործընթացում:

Հատկանշական է այն, որ ապագա գործարար ուսանողները հիմնականում բավականին բարձր լեզվական մակարդակ ունեն, սակայն դա բավարար չէ գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման տեսանկյունից:

Ժենյա-Տեր Վարդանյանը հստակ խնդիրներ է դրել իր առաջ և լուծել է դրանք բավականին բարձր մակարդակում: Նրա կողմից հետազոտության ընթացքում օգտագործած հիմնական հասկացությունները և կարգերը ճիշտ են ձևակերպված: Դա վերաբերում է հետազոտության օբյեկտին, առարկային, վարկածին, տեսական և գործնական նշանակությանը :

Հետազոտության դրական կողմերից մեկն այն է, որ ատենախոսը փորձել է նոր մեթոդաբանական դիրքերից վերլուծել հետազոտության խնդիրները: Նա հաջողությամբ կիրառել է CLIL կրթական մոտեցման սկզբունքները:

Մյուս նորույթն այն է, որ ատենախոսը փորձել է գործարարների հաղորդակցական կարողությունների զարգացման հիմնախնդիրը լուծել հաղորդակցական-ճանաչողական մոտեցման տեսանկյունից: Պատահական չէ, որ նա փորձում է ներկայացնել գործարար ոլորտին վերաբերող իմաստային-գուգորդական դաշտը, այդ դաշտին բնորոշ հիմնական հասկացույթները և հասկացությունները:

«Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» վերնագրով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 150 համակարգչային էջ է:

Հետազոտության ներածությունում ատենախոսը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները:

Առաջին գլխի («Գործարար անգլերենը մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում») առաջին «Անգլերենը հատուկ նպատակների համար (ESP)-ի զարգացումը, նպատակներն ու տեսակետները» ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը փորձում է հստակեցնել մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակն ու խնդիրները:

Երկրորդ «Գործարարական անգլերենի ուսուցման առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները» ենթագլխում ատենախոսը սահմանում է «Անգլերենը ընդհանուր գործարար նպատակների համար»/English for General Business Purposes և «Անգլերենը հատուկ գործարար նպատակների համար»/English for Specific Business Purposes հասկացությունները, վերլուծում է այդ դասընթացները: Այդ համատեքստում նա վերլուծում էն գործարար անգլերենի ուսուցման դասագրքերը, դրանց ընտրության չափանիշները:

Երրորդ՝ «Մասնագիտական առարկայի և նրա լեզվի համաժամանակյա ուսուցման հիմնախնդիրը գործարարական անգլերենի դասընթացում» ենթագլխում ատենախոսը վերլուծում է «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության» (CLIL-Content and Language Integrated Learning) հիմնախնդիրը, բացահայտում է գործարար անգլերենի դասընթացում CLIL կրթական մոտեցման առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի («Գործարար անգլերենի լեզվանյութի ուսուցման հիմնախնդիրն արդի փուլում») առաջին «Մասնագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները գործարարական անգլերենում» ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը հանգամանորեն ներկայացնում է գործարար անգլերենի բառապաշարի տեսակները, գործառույթները, ընտրության և ուսուցման սկզբունքները:

Երրորդ՝ «Մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարարական անգլերենի դասընթացում» ենթագլխում ատենախոսը բացահայտում է գործարար խոսույթի ուսուցման առանձնահատկությունները, խոսույթների տեսակները, այն իմաստային-գուգորդական դաշտերը, որոնցում շրջանառվում են գործարարության ոլորտին վերաբերող հասկացությունները և գերհակացությունները:

Աշխատանքի երրորդ գլխի («Գործարար անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը») առաջին ենթագլխում ատենախոսը համապարփակ վերլուծության է ենթարկում «հաղորդակցական կոմպետենցիա» հասկացությունը, նրա բաղադրիչները, շեշտը դնելով հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիաների առանձնահատկությունների բացահայտման վրա:

Երկրորդ՝ «Մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախդիրները գործարարական անգլերենի դասընթացում» ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը սահմանում է «գործարար հաղորդակցում» հասկացությունը, առանձնացնում է գործարար հաղորդակցական կարողություններն ու հմտությունները:

Երրորդ «Գործարարական խոսույթի ուսուցման հիմնական մոտեցումները» ենթագլխում ատենախոսը փորձում է ներկայացնել «խոսույթ» «տնտեսական խոսույթ» «գործարար խոսույթ» հասկացությունների բովանդակային և գործառական բնութագրերը, դրանց տեսակները:

Երրորդ «Գործարարական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին «Հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես գործարարական անգլերենի ուսուցման հիմնական նպատակ» ենթագլխում ատենախոսը ևս մեկ անգամ անդրադառնում է «հաղորդակցական կոմպետենցիա» հասկացությանը գործարար հաղորդակցության տեսանկյունից:

Երրորդ գլխի «Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեխնոլոգիաները գործարարական անգլերենի դասընթացում» ենթագլխում Ժենյա-Տեր Վարդանյանը ներկայացնում է գաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեխնոլոգիաները, դրանց գործառույթները, գործարար հաղորդակցության թիրախային խմբերը, գործարար անգլերենի ուսուցման գործընթացում կիրառվող ուսումնամեթոդական միջոցներ:

Երրորդ գլխի «Գործարարական անգլերենի փորձարարական ուսուցման արդյունքների ամփոփումը» ենթագլխում ատենախոսը վերլուծում է փորձարարական ուսուցման արդյունքները:

Ընդհանուր առմամբ, ատենախոսն իրականացրել է հմայարփակ, ամբողջական, աշխատանք: Բոլոր գլուխներն ու ենթագլուխներն իրար հետ տրամաբանորեն փոխկապակցված են: Ատենախոսությունը և հոդվածները շարադրված են ակադեմիական գրագրության պահանջներին համաձայն: Դրա հետ մեկտեղ, կարելի է առանձնացնել որոշ նկատառումներ .

1. Կարելի է վերլուծել ոչ միայն «գործարարություն» գերհասկացույթը այլև հասկացույթը և նրա գուգորդական -իմաստային դաշտը:
2. Ճիշտ կլիներ կիրառել գծագրական դասակարգիչ, և ոչ թե «գծագրային նյութ» հասկացությունը:
3. Խոսելով CLIL կրթական մոտեցման մասին, ատենախոսը կարող էր ավելի կոնկրետացնել, թե այն ինչ դերակատարություն ունի իր հետազոտության իրականացման համար:
4. Ատենախոսը շեշտը դնում է սովորողների վերձանաչողական կարողությունների զարգացման վրա, թվում է թե ճանաչողական կարողությունները մղվում են հետին պլան:

Այսպիսով, կան բոլոր հիմքերը պնդելու համար, որ ատենախոսության արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում: Հետազոտության արդյունքները հավաստի են: Կարելի է եզրահանգել, որ Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանի «Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի մայիսի 19-ին կայացած N7 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Միմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը, մ.գ.թ. Ա. Սայամյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Ա. Ա. Միմոնյան

Հաստատում եմ՝ 19 մայիսի 2022թ.
Գիտքարտուղար, բ.գ.թ.՝



Ռ. Ս. Կասարարովա